ՀԱՎԵԼՎԱԾ

Հաստատված է նոր խմբագրությամբ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Տնօրինության

31.08.2023թ. թիվ 69-Լ որոշմամբ

Ուժի մեջ է 04.09.2023թ.

.

ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԱՅԻՆ/ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ (ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ և ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ և ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՎՈՂ ՎԱՐԿԵՐ

Պայման	ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման ծրագիր	Գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր	ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիր
Նպատակը	• Ինտենսիվ այգիների և հատապտղանոցների հիմնում, • կարկտապաշտպան ցանցերի ներդնում, • արդիական ոռոգման համակարգերի և ջրավազանների կառուցում	• պտուղբանջարեղենի գնումներ , • խաղողի գնումներ, • կաթի գնումներ, • սպանդանոցների կողմից գյուղատնտեսական կենդանիների գնումներ, • շինշիլայի գնումներ • պտուղբանջարեղենի պահածոների արտադրության մեջ օգտագործվող ապակե բանկաների, կափարիչների, ասեպտիկ պարկերի և դրանց տարաների ձեռք բերում(մինչև 2023թ.-ի դեկտեմբերի 30-ը)	Ագրոպարենային ոլորտի սարքավորումների ձեռքբերում [i]
Առավելագույն գումար	Մինչև 8,100,000,000 ՀՀ դրամ	մինչև 4,000,000,000 ՀՀ դրամ	800,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ
Առավելագույն ժամկետ/տարի	• Այգեհիմնում՝ մինչև 8 տարի • Կարկտապաշտպան ցանցերի ներդնում – 7 տարի • Արդիական ոռոգման համակարգերի և ջրավազանների կառուցում – 4 տարի • բարձրարժեք մշակաբույսերի մշակության 2 -5 տարի	• խաղողի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի համար՝ 3 տարի • մնացած այլ վարկերի համար՝ 1.5 տարի	5 տարի
Անվանական տարեկան տոկոսադրույք	13.0%	14-16%[ii]	ՀՀ դրամ՝ 11.35%, Արտարժույթ՝8.65%
Վարկառուի կողմից փաստացի վճարվող անվանական տարեկան տոկոսադրույք	0.0%-2.0%[iii]	2.0%-7.0%[ii]	0.0%-2.0%[iv]
% հաշվարկման կարգը	%-ը հաշվարկվում է վարկի գումարի նվազող մնացորդի նկատմամբ՝ հիմք ընդունելով տարին 365 օր		
Տրամադրման եղանակը	անկախիկ	անկանխիկ	

Մարման կարգը	Արտոնյալ ժամկետը՝ • Այգեհիմնում՝ մինչև 5 տարի • Կարկտապաշտպան ցանցերի ներդնում –3 տարի • Արդիական ոռոգման համակարգերի և ջրավազանների կառուցում – 1 տարի • բարձրարժեք մշակաբույսերի մշակության 1-4 տարի	Խաղողի մթերումների/գնումների/ նպատակով տրամադրվող վարկերի մայր գումարի մարման համար սահմանված արտոնյալ ժամկետը վարկը տրամադրելու պահից հաշվարկվելու է ոչ ավելի, քան 12 ամիս, իսկ մնացած դեպքերում ՝ ոչ ավելի, քան 6 ամիս՝	Լիզինգի գումարի մարումը իրականացվում է մայր գումարի հավասարաչափ վճարման եղանակով: Հնարավոր է արտոնյալ ժամանակաշրջանի տրամադրում տարեկան մինչև 3 ամիս ժամկետով[v] Վարկի տոկոսագումարները վճարվում են ամսական պարբերականությամբ
Ապահովությունը	անշարժ գույք, հիմնական միջոցներ, երրորդ անձանց երաշխավորություններ, ապրանքանյութական պաշարներ: Վարկ/Գրավ հարաբերակցության առավելագույն ցուցանիշը՝ 70%:		անշարժ գույք, հիմնական միջոցներ, երրորդ անձանց երաշխավորություններ
Տրամադրման միջնորդավճար	Չի սահմանվում		
Վարկի գումարի մարման կետանցի դեպքում օրական տույժ՝ % մարման ենթակա գումարից	0.1%		
Տոկոսագումարի մարման կետանցի դեպքում օրական տույժ՝ % մարման ենթակա գումարից	0.1%		
Ժամկետանց վարկի գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույք	Համաձայն ՀՀ Քաղ. Օրենսգրքի 411 հոդվածի պահանջների		
Գրավի գնահատում	Ըստ պահանջի՝ բանկի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերության կողմից		
Գրավի գնահատման մոտավոր ծախս յուրաքանչյուր գույքային միավորի համար	• Բնակելի հատվածի գույքի գնահատման համար սկսած 15,000 ՀՀ դրամից • Ոչ բնակելի հատվածի գույքի գնահատման համար՝ սկսած 25,000 ՀՀ դրամից • Տրանսպորտային միջոցների գնահատման համար՝ սկսած 8,000 ՀՀ դրամից մանրամասն տեղեկատվություն ստանալու համար տես Բանկի հետ համագործակցող մասնագիտացված գնահատող կազմակերպությունների ցանկը		
Վաղաժամկետ մարման դեպքում տույժ մարվող գումարից	Չի սահմանվում		

Մոնիթորինգի գործողություններին խոչընդոտելու դեպքում՝ տուգանք	100,000 ՀՀ դրամ
Տրամադրված վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման դադարեցման դեպքերը	**ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման ծրագիր** ▪ եթե չեն պահպանվել Ծրագրով սահմանված պահանջները, վարկը նպատակային չի օգտագործվել, կամ մոնիթորինգի արդյունքում հայտնաբերվել է Ծրագրի պայմանների խախտում, ▪ եթե Վարկառուի կողմից տրամադրվել է ակնհայտ կեղծ տեղեկատվություն և/կամ Վարկառուն սահմանված կարգով Վարկատուին չի տրամադրել պահանջված համապատասխան տեղեկատվությունը և/կամ հաշվետվությունը, ▪ եթե առկա են տվյալ վարկի մասով Վրկառուի մեկ տարվա (նախորդ 12 ամիսներ) կտրվածքով հանրագումարային 60 (վաթսուն) օրվանից ավելի ժամկետանց պարտավորություններ կամ Վարկատուի հանդեպ ունեցած ժամկետանց պարտավորությունների հետևանքով՝ համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգ»-ի վարկն օբյեկտիվ չափանիշներով ստանդարտ դասով դասակարգված չէ, ▪ Վարկառուի և Վարկատուի միջև կնքված պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում: **Գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր՝** ▪ եթե առկա են տվյալ վարկի մասով մեկ տարվա կտրվածով (նախորդ 12 ամիսներ) հանրագումարային 90օրվանից ավել ժամկետանց պարտավորություններ, կամ օբյեկտիվ չափանիշների համաձայն վարկը ստանդարտ դասով դասակագված չէ, ▪ թողարկված և իրացված ծավալների մասին հաշվետվությունը Վարկառուի կողմից յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող տասն աշխատանքնային օրվա ընթացքում Բանկ չներկայացնելը, ▪ վարկն օգտագործվել է ոչ նպատակային և/կամ սուբսիդավորման պայմաններին ոչ համապատասխան, ▪ Որպես վարկային միջոցների ստացման հիմք է ներկայացվել վարկառուին սեփականության կամ օգտագործման իրավունքով պատկանող կամ վարկառուի հիմնադիր կամ ավելի քան 10 տոկոս բաժնետոմս ունեցող բաժնետեր հանդիսացող անձանց և նրանց ընտանիքի անդամների (ծնող, ամուսին, զավակ) կողմից մշակվող հողատարածքների բերքի կամ դրա մի մասի գծով վարկառուի հետ կնքված բերքի գնման պայմանագիր: **ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիր** ▪ եթե առկա են տվյալ լիզինգի մասով մեկ տարվա կտրվածով (նախորդ 12 ամիսներ) հանրագումարային վաթսուն օրվանից ավել ժամկետանց պարտավորություններ, կամ օբյեկտիվ չափանիշների համաձայն լզիզնգը ստանդարտ դասով դասակագված չէ, ▪ ԵրբՄոնիթորինգի արդյունքում արձանագրվում է ծրագրի պայմանների խախտում
Ստացված սուբսիդավորված գումարների ետ վերադարձը	Վարկի ոչ նպատակային օգտագործման և/կամ սուբսիդավորման պայմաններին ոչ համապատասխան օգտագործման դեպքում մինչև այդ պահը ԳՖԿ-ի կողմից սուբսիդավորված տոկոսագումարները Վարկառուի կողմից ենթակա են վերադարձման՝ խախտումը հայտնաբերելու օրվանից 1 ամսվա ընթացքում:
Գործող պայմանագրի (վարկային, գրավի, այլ) պայմանների փոփոխություն	50.000 ՀՀ դրամ

Վարկի տրամադրման որոշումը կայացնելու ժամկետը	հաճախորդի կողմից պահանջվող բոլոր փաստաթղթերը բանկին տրամադրելուց 20 աշխատանքային օրվա ընթացքում
Վարկի տրամադրման որոշման մասին հաճախորդին տեղեկացում	2 աշխատանքային օր
Վարկը փաստացի տրամադրելու ժամկետը	հաճախորդի կողմից վարկի ձևակերպման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց 3 աշխատանքային օրվա ընթացքում
Հաստատված/դեռ չտրամադրված վարկի պայմանների վերանայում	50,000 դրամ, սակայն ոչ ավել, քան նախկին որոշման համար գանձված/գանձվելիք միջնորդավճարի գումարը
Այլ պայմաններ	**ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման ծրագիր՝** Սույն ծրագրի շրջանակում վարկերը տրամադրվում են հետևյալ նպատակներով ▪ 0.5 -200 հա այգեհիմնման նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում. ▪ 0.5-100 հա տարածքի համար ոռոգման արդիական համակարգերի և (կամ) ջրավազանների կառուցման կամ ընդլայնման և (կամ) 0.5-100 հա կարկտապաշտպան ցանցերի ներդրում. ▪ 1.0-30 հա ծնեբեկի, պրասասոխի, ռուկոլայի, բրյուսելյան և պեկինյան կաղամբների, կոլրաբիի, գանգրակաղամբի (կալե), ցուկինիի (դեղին կամ մուգ կանաչ) և պատիսոնի, քաղցր եգիպտացորենի մշակության նպատակով, **Ծրագրի շրջանակում տրամադրվող Վարկի գումարը չեն կարող գերազանցել Ծրագրով սահմանված առավելագույն սահմանաչափերը** **Գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր** • վերամշակման գործունեություն իրականացնող յուրաքանչյուր վարկառուին խաղողի մթերումների (գնումների) նպատակով յուրաքանչյուր տարի կարող է տրամադրվել մինչև 4.0 մլրդ դրամի վարկ, • վերամշակման գործունեություն իրականացնող յուրաքանչյուր վարկառուին պտուղբանջարեղենի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի մայր գումարի մնացորդը չի կարող գերազանցել 3.0 մլրդ դրամը, • վերամշակման գործունեություն իրականացնող յուրաքանչյուր վարկառուին կաթի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի մայր գումարի մնացորդը չի կարող գերազանցել 1.0 մլրդ դրամը, • սառնարանային պահպանության և արտահանման գործունեություն իրականացնող յուրաքանչյուր վարկառուին պտուղբանջարեղենի և խաղողի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի մայր գումարի մնացորդը չի կարող գերազանցել 3.0 մլրդ դրամը, • սպանդանոցային գործունեություն իրականացնող յուրաքանչյուր վարկառուին գյուղատնտեսական կենդանիների գնումների նպատակով տրամադրվող վարկերը հաշվարկվում են սպանդանոցի մակերեսով՝ 15 մ2 մակերեսի համար ոչ ավելի, քան 2.0 մլն դրամ հաշվարկով, իսկ շարժական սպանդանոցի համար՝ ոչ ավելի, քան 5.0 մլն դրամ, • շինշիլայի մորթու արտահանման գործունություն իրականացնող յուրաքանչյուր վարկառուին շինշիլայի գնումների նպատակով

	տրամադրվող վարկերի մայր գումարի մնացորդը չի կարող գերազանցել 50.0 մլն դրամը, **ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիր՝** • ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր լիզինգառուի կողմից ձեռք բերվող սարքավորումների արժեքների հանրագումարը չպետք է գերազանցի 1 մլրդ ՀՀ դրամը: • Լիզինգառուն վճարում է լիզինգի առարկայի արժեքի 20%-ի չափով կանխավճար:
Գրավի ձևակերպում	• նոտարական վճար – միանվագ 13.000-25.000 ՀՀ դրամ՝ անշարժ գույքի դեպքում,(գյուղատնտեսական նշանակության անշարժ գույքերի դեպքում՝ մինչև 10,000 ՀՀ դրամ) • անշարժ գույքի գրավի իրավունքի գրանցման վճար՝ առավելագույնը 26.000 ՀՀ դրամ (գյուղատնտեսական նշանակության անշարժ գույքերի դեպքում՝ մինչև 4,000 ՀՀ դրամ) • ՀՀ Ոստիկանության վճար (միասնական տեղեկանքի և շարժական գույքի գրավադրման համար) – միանվագ 5.000 ՀՀ դրամ

[i]Լիզինգը տրամադրվում է հետևյալ ոլորտներում օգտագործվող ագրոպարենային սարքավորումների ձեռք բերման նպատակով. անասնաբուծություն, այդ թվում՝ տավարաբուծություն, ոչխարաբուծություն, խոզաբուծություն, թռչնաբուծություն, ձկնաբուծություն, մեղվաբուծություն և արդյունագործական գազանաբուծություն, բուսաբուծություն, այդ թվում՝ ջերմոցային տնտեսություն, սառնարանային տնտեսություն, այդ թվում՝ կաթի մթերման կայաններ, թարմ պտուղբանջարեղենի և հատիկաընդեղենի տեսակավորման, փաթեթավորման ու հատիկաընդեղենի զտման գործունեություն, սպանդանոցային տնտեսություն, ագրովերամշակող արդյունաբերություն, ագրոպարենային ոլորտի այլ գործունեություն:

[ii] Տրամադրվող վարկերի առավելագույն տոկոսադրույք չի սահմանվում, Սուբսիդավորվելու է վարկի տոկոսադրույքի տարեկան 9 տոկոսային կետին համարժեք մասը (գումարը), իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված՝ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող և նույն վայրերում գյուղատնտեսական հումք մթերող և վերամշակող տնտեսավարողների համար՝ 12 տոկոսային կետին համարժեք մասը (գումարը):

iii Բանկի կողմից վարկերը տրամադրվում են մինչև 13% տոկոսադրույքով, որոնցից վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որ շահառուներին վարկը տրամադրվի 2% տոկոսադրույքով, իսկ ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի տնտեսավարողներին, գյուղատնտեսական կոոպերատիվներին, զինվորական ծառայության պարտականությունների կատարման ժամանակ մարտական հերթապահության կամ գործողությունների իրականացման արդյունքում հաշմանդամ դարձած քաղաքացիներին, գյուղատնտեսությունում տնտեսավարող երիտասարդներին (18-35 տարեկանը չլրացած ֆիզիկական անձանց (վարկային պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահին), այգեհիմնման և (կամ) ոռոգման արդիական համակարգերի ներդրման դեպքում նաև ՀՀ Կառավարության կողմից սահմանված գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ներդրողներին՝ 0% տոկոսադրույքով.

[iv]ՀՀ սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնող տնտեսվարողների համար լիզինգառուի կողմից վճարվող լիզինգի տարեկան տոկոսադրույքը կկազմի 0%:

[v]Կարող է սահմանվել լիզինգի մայր գումարի համար արտոնյալ ժամկետ՝ լիզինգը տրամադրելու պահից առավելագույնը 3 ամիս ժամկետով: Բացի այդ, կարող է սահմանվել Լիզինգի հիմնական գումարի վճարման համար դադարի շրջաններ՝ տարեկան մինչև 6 ամիս ժամկետով: